

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

H.H. KAREKIN II

ՄԱԿԱՍԵՍԻ Ի ԳՐԻՍԻՄԻ ԴԵՄԵՏԻՍՏԻ ԳԵՆԵՐԱԼԻՍՏԻ ԲԱՍՏՆԱԿԱՆ ԳԱՐԵԳԻՆ Բ.

SUPREMACY OF THE ARMENIAN CATHOLICOS OF ALL ARMENIANS



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

12001

Հայաստանի
ՍՊՈՒՄ
ԳԱՐԵԳԻՆ Բ.

328-2000
20406-ՇԻ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱՐՈՌՍ. ԷԶՄԻԱԾԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

**Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԱՌԻԹՈՎ
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ**

2000 թ. Յունուարի 6

Գոհութիւն եւ փառք Քեզ Տէր Ամենակալ, որ շնորհք պարգեւեցիր ինձ՝ որպէս Հայրապետ Ամենայն Հայոց, Միածնաէջ Հայոց Բեթղեհեմի մէջ ի լրումն դարի եւ երկրորդ հազարամեակի Քո Սուրբ Ծննդեան աւետաբերը եւ քարոզիչը լինելու հաւատաւոր իմ ժողովրդին, ի Հայաստան, Արցախ եւ ի սփիւռս աշխարհի:

«Ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեան, զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» - Ղուկ. 2: 10 -:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,

2000 տարիներ առաջ, հրէշտակաձայն այս աւետիսը առաջինը լսեցին Բեթղեհեմի պարզ հովիւները եւ շտապեցին գտնելու Փրկչին, տեսան «խանձարուորով փաթաթուած եւ մտուրի մէջ դրուած մանկանը» «եւ ճանաչեցին նրան»:

Աշխարհը սպասում էր Փրկչին: Աշխարհը լի էր սպասումով: Հին աշխարհը բռնատիրութեան իր բարքերով, մարդկանց ու ժողովուրդներին օտարացնող ու թշնամացնող յարաբերութիւններով աւելի ու աւելի էր կորցնում բարոյական իր արժէքն ու պատկերը եւ ճիրաններում մեղքի կապանքների ու հոգեկան տուալանքների սպասուլք էր Աւետաբերին ազատութեան, արդարութեան ու խաղաղութեան: Եւ նա եկաւ ի լրումն ժամանակի: Մարդասէր Աստուած Արարչական Իր Սիրով վերստին ընդառաջ էլաւ տկարացած եւ անկեալ մարդուն՝ առաջնորդելու նրան դէպի յաւիտենական կեանքի փրկարար ուղի: «Չի յայտ էրեւեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի Որդին իւր Միածին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք» - Ա. Յովհ. 4: 9-:

Յիսուս աշխարհ եկաւ գերեզմարուած, աննշան մի երկրի փոքրիկ քաղաքում, ամենահամեստ ընտանիքում: Նա եկաւ հոչակելու եւ հաստատելու, որ Աստուծոյ առաջ չկայ խտրականութիւն, չկայ մեծ եւ փոքր, զօրեղ ու տկար, հարուստ ու աղքատ: Եկաւ բժշկելու, միխթարելու, փրկելու խեղուած հոգիներ, ձայնողուած կեանքեր, եկաւ ճշմարտութիւնն ուսուցանելու, ազատելու մարդկային հոգին մեղքի կապանքներից եւ յարութիւն պարգեւելու: Մտուրի խոնարհ ծածկի տակ ծնունդ առած Արքայն սիրով մուտք գործեց իրճիթներ, նուաճեց մարդկանց սրտեր, խաչով ու յարութեամբ յաղթեց աշխարհին՝ ճշմարտելով բոլոր ժամանակների համար իր խօսքը. «Ահա պիտի գայ ժամանակ եւ արդէն իսկ եկել է... քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհը»: Արդարեւ, Նա չունէր հարստութիւն, զօրք ու գէնք, սակայն Սիրով Իր Աստուածային, յաղթեց աշխարհին:

Պատմութեան մէջ ակնթարթ է կարճատեւ այն ժամանակահատուածը, որ Մարդացեալ Աստուած՝ Յիսուս Զրիստոս, գործեց մարդկանց մէջ: Այդ ակնթարթը փոխեց ժամանակի ընթացքը՝ ամենուր հաստատելով առ Աստուած Հաւատքի վստահութիւն, Յոյսի լաւատեսութիւն, Սիրոյ ջերմութիւն, Սիրով՝ հաշտութիւն միմեանց եւ Աստուծոյ հետ: Եւ արդ, սիրելիներ, բաց է ճանապարհը դէպի Աստուած եւ մեզ է թողնուած ընտրութիւնը:

Սիրելի բարեպաշտ, հաւատաւոր հայորդիք,

Վերստին կանգնած ենք Աստուածայայտնութեան հրաշքի առջեւ եւ երկուեագրերորդ անգամ ունկնդիր ենք «զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ» երկնառաք մեծ

աւետիսին: Մարդկային հոգիներում երկուհազարերորդ անգամ այս աւետիսը նորոգում է վեհախորհուրդ գիշերուայ հիասքանչ պահը Բեթղեհէմի: Երկուհազարերորդ անգամ մեր հոգու աչքով հետեւում ենք երկնքում պայծառ շողացող աստղի ընթացքին և լոյսի արձակ շիթերի մէջ վերնվարող հրեշտակների հետ սաղմուտերգում. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»: Երկուհազարերորդ անգամ Մանուկ Յիսուսի սնարի առջեւ Արեւելքի խորագլու մոզերի հետ «Խոնարհեալ երկխոյի» երկրպագում, օրհնում և փառաբանում ենք Մարդացեալ Աստուծո՛ւ բերկրանօք սրտի, որ խոնարհ մուրին փոխարինել են փառաշուք տաճարներ, տօնական հրապարակներ ու սրահներ, մոզերին և հովիւներին՝ քրիստոնեայ պետութիւններ ու ժողովուրդներ՝ առաջնորդ Հովուապետերով, բազմահազար եկեղեցականներով, քրիստոնեայ նախագահներով ու վարչապետներով: Փա՛ռք Բրիստոսի ամենազօր Մննդեան, որ լուսապսակ գարդարում է ամէն տարեմուտ:

Բրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:

Բրիստոս ծնունց, սակայն ոչ այլուր, եթէ ոչ մարդկանց՝ մեր հոգիներում, Իր Աւետարանի կենարար խօսքով ազնուացնելու մարդկանց մտածումները, ուղղելու նրանց ձեռաց գործերը, ճշմարտութեան և բարու արժէքներով իմաստաւորելու մարդկային կեանքը:

Բայց ո՛ր է խաղաղարար Բրիստոս, երբ մարդկութիւնը յօշոտում է պատերազմներում, ո՛ր է կարելից ու ողորմած Բրիստոս, երբ միլիոնատր մարդկանց կոկորդոն է սեղմում մութագիկութիւնն ու սովը, ո՛ր է ազատարար Բրիստոս մարդու և ազգերի ազատ ապրելու իրաւունքի աղաղակող ոտնահարումների կողքին: Ի վերջոյ, ո՛ր է Բրիստոս ազգային-հասարակական մեր կեանքում, երբ հաստուն ենք, որ Սիրոյ յաթօնակակ է Բրիստոս. Աստուծոյ սերն է առ մարդը, մարդու սերը առ Աստուած, մարդու Սէրը առ իր նմանը: Արդ, ուրեմն յօերանանք եղբայրասիրութեան մէջ, խաղաղութեան փնտոռումի ճանապարհին, չկարանենք միմեանց սաստարելու, դժուարութիւնների մէջ համբերելու, հաւատաւոր գործերով ապրելու: Չուշանանք միաբանուելու, չպարտուենք հող հայրենիք պահելու ու շենացնելու, համազգային հրամայականներին պատասխաններ գտնելու, մեր նախնեաց ու մեր երազները իրական դարձնելու գործերում: Հօգու ողջ յանձնառութեամբ ստանձնենք մեր ժողովրդի գալիքի պատասխանատուութիւնը՝ ժողովուրդների մեծ ընտանիքում յարատեւելու հաստատուն կամքով:

Հաւատո՛ւմ ենք, որ երկնային մեր Վարդապետը յաղթեց Իր խօսքին համարժէք գործով: Հաւատո՛ւմ ենք, որ իրական է Բրիստոսով Յարութիւնը: Հաւատո՛ւմ ենք, ուրեմն ինչպէ՛ս ուրանանք ինքներս մեզ, ժամանակաւոր հոգսերից դրոշուած, լքենք մեր Հայրենիքը, փոխենք մեր չափանիշները ու արժէքները և վստանենք Աստուծոյ ու մեր նախնիներից մեզ վստահուած ժառանգութիւնը:

Սիրելիներ.

Նոր հազարամեակի շենին, համայն քրիստոնեայ աշխարհի հետ այսօր մենք եւս, Հայ Առաքելական Եկեղեցու գաւալներս ի Հայաստան, Արցախ և ի Սփիւռս, կողոն ու ընդունողն ենք «մեծ և սքանչելի» խորհուրդի՝ Սուրբ Մննդեան բերկրավոր աւետիսի՝ լի սպասումով խաղաղութեան, բարի կամեցողութեան, համերաշխութեան ու սիրով համագործակցութեան վերահաստատմանը աշխարհում: Թող արդարութեան Արեգակի խաւարացիք շողերը բացեն առաւօտը նոր դարաշրջանի: Թող Սիրոյ Աւետարերի օրհնութեան մէջ և խաղաղութեան Իշխանի տնօրինութեան ներքոյ երկիր մուրտակը շարունակի իր պտոյտը յաւերժ:

Մարդացեալ Փրկչի հրաշափառ Յայտնութիւնը մշտապէս խնդրութեամբ է համակուր հոգիները բազում փորձութիւններ ապրած մեր ժողովրդի գաւալների: Արդարեւ, Տիրոջ 2000 թուականը դիմաւորում ենք յոյսով, բարի ակնկալիքներով, որոնց երաշխիքը հայրենի մեր հողում՝ Հայաստանում և Արցախում հաստատուած խաղաղութիւնն է նաեւ՝ որպէս մեր ժողովրդի անցնող դժուարին տասնամեակի վաստակեալ ձեռքբերում, մեր գոհաբերութիւնների անուրանալի արքայսիր: Այսօր, Հովուապետիս հայցն է առ Աստուած ու խնդրանքը, որ թանկ ձեռք բերուած խաղաղութիւնը լինի անբեկանելի, որ այն Բեթղեհէմի Լուսաստղի շողերով հաստատուի նաեւ իւրաքանչիւր հայորդու կեանքում՝ բերելով հօգու անդորր հաշտութիւն ու երջանկութիւն: Մեր աղօթքն ու մաղթանքն է նաեւ,

որ Աստուածայրտնութեան 2000 թուականը նշանաւորուի Սիրո՛վ նուաճուած յարթանակներով եւ հոշակուի ու դառնայ հաշտութեան եւ փոխադարձ վստահութեան տարի, որպէսզի մեր հոգիները փարատուեն անցնող դարաշրջանի ողբերգութիւններէց, նախորդ տարուայ տուգնապնէրից, ներկայ կեանքի անարդարութիւններով ու դժուարութիւններով սմբարուած դառնութիւններէց ու անհանդուրժողութիւնէց, որպէսզի ողորմածութիւնը, գթասրտութիւնը, արիութիւնն ու արդարամտութիւնը, ճշմարտութեան ոգին լինեն մեր կեանքի ուղեկիցները՝ օգնելով Հայրենի հողի վրայ եւ Սփիւռքում նորոգելու հարանց մեր հաւատքը, զօրացնելու հայրենապաշտ մեր ոգին, շէն ու բարգաւաճ դարձնելու անկախացեալ մեր Հայրենիքը, սիարանուելու համազգային իղձերի շուրջը՝ որպէս մէկ Ազգ, մէկ Հայրենիք, մէկ Եկեղեցի՝ ի վկայութիւն եւ ի հաստատում, որ Աստուածայրտնութիւնը՝ Յիսուսի Սուրբ Մտնունդը, սշտապէս իրական է մեր կեանքում:

Ահաասիկ ակետարանեն ձեզ ուրախութիւն մեծ.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ ակետիս:

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

“VOUS DEVIENDREZ MES BRAS”

Վատիկան կատարած իմ առաջին ուղեւորութեան միջոցին բարեբախտութիւնն ունեցայ, ի շարս շքել ու հսկայական տաճարներու, այցելելու նաեւ փոքրիկ մատուռներ ու եղբայրութիւններ: Անոնցմէ մէկը, որ կը կոչուէր Սենթ Էճիտիօ, զիս չափազանց յուզեց ու խորապէս ներգործեց վրաս հաւատքի իր հրաւերով, անշուք ու աղքատիկ իր տէւքով եւ պարգուրեանք: Վանական մը բացատրութիւններ կու տար կառույցի ու յարակից շինութիւններուն մասին, որմէ ետք մեզի առաջնորդեց ներս, ուր կը գտնուէր փոքրիկ մատուռը: Այստեղ զիս առանձնապէս տպաւորեց խաչեալ Քրիստոսի պարզուակ մէկ քանդակը: Ուղեկցորդը հարկ եղած բացատրութիւնները տալէն ետք ուշադրութիւնս հրաիրեց այն բանին վրայ, որ Քրիստոսի աչ ու ձախ թեւերը կտրուած էին եւ իր խօսքն ամփոփեց քանդակի հետեւեալ պատգամով — Քրիստոս մեզի կոչ կ'ընէ դառնալու իր թեւերը. “Vous deviendrez mes bras”:

Եւ իրաւ. մարդը, որպէս Աստուծոյ արարչագործութեան կատարելատիպը, իր մէջ կը պարփակէ աստուածային պատկերը: Մեզմէ ամեն մէկը կոչուած ունի ծառայելու Աստուծոյ եւ համայն աշխարհի բարօրութեան: Քրիստոսի Աւետարանը կը դառնայ կենդանի Աւետարան, եթէ Աստուծոյ շունչն ապրեցնենք մեր մէջ:

Սենթ Էճիտիոյ խաղաղ մթնոլորտին մէջ նոր կանչ մը լսեցի, որ տակաւին կ'արձագանգէ հոգիիս խորքը. Քրիստոսի ձայնն է, որ կ'ըսէ. «Դուք իմ թեւերս պիտի ըլլաք». “Vous deviendrez mes bras”

«Հոգեշունչ Մանրապատումներ» էջ 89

Յովնան Արք. Տերտերեան